ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 53

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/69» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մարկշին» ՍՊԸ-ի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջներին մասնավորապես. վերջինիս կողմից ներկայացված հայտում բացակայում էին հրավերով պահանջվող բնակելի, հասարակական և արտադրական առնվազն 3-րդ դասի և ջրամատա-կարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) առնվազն 3-րդ դասի լիցենզիաները: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 41-րդ կետով և «ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/69» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամեկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիքով հայտը գնահատվել էր անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, ընթացակարգի հրավերով հայտի ապահովում վճարելու պարտավորություն նախատեսված չի եղել և «Մարկշին» ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am հարթակում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/69	1	Հրազդան խոշորացված համայնքի Լեռնանիստ բնակավայրի մշակույթի շենքի մի մասի վերանորոգման աշխատանքներ	12.474.428,41	«Մարկշին» ՍՊԸ	00498477	ՀՀ, Ք. Երևան, Արցախի փողոց 14 շենք, բն. 6	24.11.2025	Հրազդանի համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/69» ծածկագրով հրավերի 8.9 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 19-րդ կետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ	Առկա չէ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հունվարի 2026թ.
ք.Հրազդան